ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԾՁԲ-25/4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնման ընթացակարգի գնահատող գնահատող հանձնաժողովի նիստ

ք.Երևան
04 փետրվարի 2025թ. ժամը 11:00

Մասնակցում է

Հանձնաժողովի նախագահ՝ Տիրան Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ Հայկ Հովհաննիսյան, Տաթևիկ Պալոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Նելլի Աբովյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԾՁԲ-25/4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնման ընթացակարգի հրավերի և հայտարարության տեքստը հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովի նախագահ Տ. Խաչատրյանը նիստը հայտարարեց բացված և, հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից 03.02.25թ-ին ներկայացված գնման հայտը, ինչպես նաև ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության գլխավոր քարտուղար Տ. Իգիթյանի 03.02.2025թ.-ի «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԾՁԲ-25/4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով ստեղծելու մասին թիվ 120-Ա հրամանը, ներկայացրեց ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության 2024թ.-ի կարիքների համար «տպագրական ծառայությունների» գնման հայտարարության և հրավերի տեքստերը, գնման ընթացակարգի հետ կապված ամբողջ փաթեթը: Հանձնաժողովը ուսումնասիրեց և որոշեց՝

1. -հաստատել էլեկտրոնային աճուրդի ձևով գնման ընթացակարգի հայտարարության և հրավերի տեքստերը,
2. -հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հետադարձ աճուրդի ավարտից հետո, նույն օրվա ընթացքում, ք.Երևան, Արշակունյաց պ. 63:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0
Հանձնաժողովի

Նախագահ՝_____ Տ. Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝

1. _____ Հ. Հովհաննիսյան

2. _____ Տ. Պալոյան

Քարտուղար՝_____ Ն. Աբովյան